**Արձանագրություն N 2**
**ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/13 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (e-AUCTION) միջոցով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի**

ք.Երևան

23 հունիսի 2026թ.
ժամը՝ 14:30

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Ա. Գրիգորյան |
| Հանձնաժողովի բացող անդամներ՝ | Ա. Արտաշյան |
| | Լ. Ղազարյան |
| Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ | Գ. Սահակյան |
| | Մ. Մելիքսեթյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ս. Այվազյան |

**1. <u>Հանձնաժողովի նիստի օրակարգը</u>**
**(Ա. Գրիգորյան)**

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.
1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. **ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/13** ծածկագրով հայտերի բացման մասին,
3. Գնման ընթացակարգի հայտեր պարունակող ծրարների բացման մասին,
4. Անհամապատասխանությունները շտկելու մասին,
5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0***

**2. ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/13 <u>ծածկագրով հայտերի բացման մասին</u>**
**(Ա. Գրիգորյան)**

Հայտերը բացվել են www.eauction.armeps.am կայքի՝ էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով: Գնման ընթացակարգի աճուրդը մեկնարկել է 2026 թվականի հունիսի 23-ին, ժամը 14:00 և ավարտվել է 2026 թվականի հունիսի 23-ին, ժամը 14:30:

Սահմանված ժամկետում, սահմանված կարգով հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| | | |
|---|---|---|
| 1 | «ԹԵՔՍԵՐՎ» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, 0029, Աջափնյակ, Գ1 թաղամաս փ. 2, տ. 53 հեռ. +374 98 27 73 46, info@techserve.am |

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0***

**3.Գնման ընթացակարգի հայտեր պարունակող ծրարների բացման մասին**

**(Ա. Գրիգորյան)**

Մասնակցի կողմից ներկայացված փաթեթում փաստաթղթերը կազմված են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Մասնակցի կողմից ներկայացված փաթեթում Հրավերով սահմանված փաստաթղթերն առկա են, բացառությամբ «ԹԵՔՍԵՐՎ» ՍՊ ընկերության ներկայացրած փաթեթի՝ բացակայում են Հռիփսիմե Ռամազյանին տրված Լիազորագիրը, ինչպես նաև արտադրողի կողմից տրված համապատասխանության վկայականը և արտադրողի լիազորագիր (MAF) նամակ-հավաստումը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:***

**4. Անհամապատասխանությունները շտկելու մասին**

**(Ա. Գրիգորյան)**

Քանի որ հայտերի գնահատման արդյունքում արձանագրվել են անհամապատասխանություններ, ուստի հանձնաժողովը որոշեց.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 41-րդ կետի համաձայն՝ վերը նշված անհամապատասխանությունների մասին ծանուցել «ԹԵՔՍԵՐՎ» ՍՊ ընկերությանը:

Շտկումները պետք է ներկայացվեն էլեկտրոնային եղանակով՝ (eauction.armeps.am) համակարգի միջոցով, մինչև 25.06.2026թ. ժամը 17:00 ներառյալ:

***Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:***

**5.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**

**(Ա. Գրիգորյան)**

**ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/13** ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (eauction.armeps.am) միջոցով գնման ընթացակարգի գնահատման համար հայտերում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել 2026 թվականի հունիսի 25-ին՝ ժամը 17:00-ին, ք. Երևան, Գ. Հովսեփյան 26 հասցեում:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0***

Հանձնաժողովի.

| | |
|---|---|
| նախագահ՝ | Ա. Գրիգորյան |
| բացող անդամներ՝ | Ա. Արտաշյան |
| | Լ. Ղազարյան |
| գնահատող անդամներ՝ | Գ. Սահակյան |
| | Մ. Մելիքսեթյան |
| քարտուղար՝ | Ս. Այվազյան |